

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Ա) ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոյն տարելիշանին ունեցանք երկու դասախօսութիւններ։—

1.— 1 Սեպտեմբեր 1968-ին տեղի ունեցաւ առաջին դասախօսութիւնը, ընտրանի հասարակութեան մը ներկայութեան, Դասախօսն էր Տոքթ. Վաղգէն Լ. Բարսեղեան, նիւթ ունենալով ՄԱՐԴԸ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ, Տոքթ. Բարսեղեան բնագիտութեան մէջ իր ուսումը ստացած է Մասաչուսէցի Արուեստագիտական Հաստատութենէն՝ Նիւ Կիւ Գորքի Համալսարանին մէջ։ Ներկայիս ան կը դասախօսէ Բազմաբուստից Հիմնարկին մէջ, Դասախօսութենէն ետք, առիթ տրուեցաւ ներկաներուն հարցումներ ուղղել յարգելի դասախօսին։

2.— Նոյն ամսուան 25-ին, կ. ե. ժամը 4:30-ին ունեցանք մեր երկրորդ դասախօսութիւնը, սակայն այս անգամ միայն ուսանողութեան համար։ Օղտուելով Փրօֆ. Արարկ Միլիթարեանի ներկայութենէն, յիշեալը խիստ հետաքրքրական նիւթ մը ընտրած էր, զոր սիրով ընդունեց դասախօսել Հայ ուսանողութեան։ Այն խօսեցաւ հետեւեալ նիւթին շուրջ. ԱԿՆԱՐԿ ԵՂԻՊՏԱԿԱՆ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ. Թարգմարտան

Փրօֆեսէօրը անդամ է Պրիւքսէլի Արքայական Թանգարանին։

Բ) ՏԻԱՐ ՃՕՆ ՌԻՕԼԻ ԺԱՄԱՆՈՒՄ

Լոնտոնի Ս. Սարգիս Խնամակալ Մարմինը յարմար տեսած էր մասնագէտ գրողարանապետ մը զբիւլ, որուն պատճառով պիտի ըլլար մօտէն ծանօթանալու Կիւլ-պէնկեան Մատենադարանի աշխատանքներուն եւ ուսումնասիրելու անոր անիմիակն կարիքները։ Սոյն անձն էր Պր. Ճօն Ի. Ռիօլը, որ Սեպտեմբերի մէջ եկաւ, ծանօթացաւ, ուսումնասիրեց եւ պատրաստեց իր տեղեկագիրը՝ ներկայացնելու համար Ս. Սարգիս Խնամակալ Մարմինին։ Կը յուսանք որ իր տեղեկագիրը կը դառնէ լայն ընդունելութիւն եւ կը վաւերացուի Խնամակալ Մարմինին կողմէ։

Գ) ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ՍՏԱՑՈՒՄ

Ստորեւ կը ներկայացնենք Նուէր ոտացուած, Կոխանակուած եւ դնուած գիրքերու քանակները։—

1.— Նուէր ոտացուած	186
2.— Փոխանակութեամբ	46
3.— Գնուած	106
Գումար՝	338

Դ) ԵԼԵՒԻՍԱԿԱՆ

1968 Յունուար – Դեկտեմբեր

	Խ. Ոսկի
1.— Նոր գիրքերու եւ քերթերու գնում	1186.45
2.— Գրեմական պիտոյք	266.70
3.— Զամագամ ծախքեր	871.85
4.— Աշխատավարձ	1124.00
5.— Թղթատարական ծախքեր	988.50
6.— Թերթերու եւ գիրքերու կազմողչէք	2487.00
7.— Սինոնիկ հետ փոխանակուած քերթերու փոխարէն վճարուած Սինոնիկ վարչութեան	1000.00
8.— Պարտզի ծախքեր	512.50
9.— Մամբնագրութիւն	160.00
10.— Ամսական — ա) Գարտուղար	1440.00
բ) Գիրքեր դասաւորող	700.00
գ) Մաքրութեան	700.00
Գումար	11437.00

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԻԱՆ

Քարտուղար

ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ